ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՆԻ ՈՒԹՈՒՋՅԱՆ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ» ԿՈՐԱԾ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՀԵՂԻՆԱԿԸ

Տոհմագրությունը պատմագրական յուրօրինակ ժանր է, որ հայ մտավոր իրականության մեջ նշանավորվեց դեռեւս ԺԷ. դարում՝ Տարոնին եւ Հայոց Աղվանքին նվիրված երկասիրությունների ի հայտ գալով: Նույն այդ ժանրին են պատկանում նաեւ Արծրունյաց (Ժ. դար), Օրբելյան (ԺԲ.-ԺԴ. դդ.) եւ այլ տների ու տոհմերի պատմությունները ներկայացնող առանձին գրվածքներ: Հետեւաբար, պատահական չպետք է համարել, որ նույն տրամաբանությամբ պատմագրական հատուկ երկասիրություն կարող էր նվիրվել նաեւ միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր տներից մեկին՝ Բագրատունիների տոհմին: Ժ. դարասկզբի պատմագիր Շապուհ Բագրատունու Պատմությունը, որ, ցավոք, մեզ չի հասել, պայմանականորեն նույնպես կարելի է դասել տոհմագրության ժանրին, թեեւ, ինչպես վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, այստեղ հեղինակն անդրադարձել է Ը. դարավերջից մինչեւ Ժ. դարասկիզբ ընկած ժամանակաշրջանի Հայաստանի պատմության հարցերին՝ առանցք ունենալով Աշոտ Մնակերից մինչեւ Սմբատ Ա. Բագրատունի թագավորի ժամանակները[1]:

[1] Տես **Պ. Հովհաննիսյան**, Անանուն Ջրուցագիրը եւ իր Պատմությունը. «Մատենագիրք Հայոց», հտ. Թ., Թ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1001-1005. նաեւ՝ **Վ. Առաքելյան**, Շապուհ Բագրատունի եւ Անանուն Ջրուցագիր. տես **Կարծեցյալ Շապուհ Բագրատունի**, Պատմություն, Երեւան, 2011, էջ 3-53 (հատկապես՝ հավելվածները, էջ 186-224):

Բնականաբար, Բագրատունյաց տոհմի փառավոր անցյալն ու հայոց պատմության ծիրում նրա խաղացած դերի բացահայտման անհրաժեշտությունը չէր կարող համապատասխան արձագանք չունենալ եւ գնահատականի չարժանանալ պատմագրական հատուկ, առանձին երկասիրության միջոցով: Հենց այդ դերի արժեւորմանն էլ նվիրված է եղել հայ միջնադարի ամենաերեւելի վարդապետներից մեկի՝ Հովհաննես Կոզեռնի «Պատմութիւն Տանն Բագրատունեաց»՝ մեզ չհասած երկասիրությունը:

Հայ միջնադարյան բազմահարուստ ու բազմաժանր պատմագրության ցավալի ու անդառնալի կորուստներից է «Աստուածազգեաց եւ հրեշտակակրօն, լի իսկ առաքելական եւ մարգարէական գրոց գիտութեամբ, լցեալ վարդապետական շնորհաւք»[2] բազմահմուտ գիտնականաստվածաբան Հովհաննես Կոզեռն Տարոնացու՝ Բագրատունյաց տան պատմությանը նվիրված երկասիրությունը: Ամբողջ միջնադարում Հովհաննես Կոզեռնը հռչակված է եղել որպես հմուտ տոմարագետ («Մեկնութիւն տումարի»)[3]:

Հովհաննես Կոզեռնի՝ Բագրատունյաց տան պատմությանը նվիրված երկասիրությունը թեեւ մեզ չի հասել, սակայն, բարեբախտաբար, հրաշքով պահպանվել է մի հատված, որ տեղ է գտել վեց տարբեր ձեռագրից բաղկացած եւ Մաշտոցյան Մատենադարանում Հմր 1775 գրչագրի ներքո գրանցված ժողովածուում[4]: Այստեղ մեզ հետաքրքրող հատվածը գտնվում է Բ. ձեռագրում (էջ 8 բ-16 ա), որ ԺԷ. դարի գրչություն է: Պահպանված հատվածը բավականաչափ տեղեկություններ է պարունակում Հովհաննես Կոզեռնի Պատմության խորագրի, հեղինակային պատկանելության, պատվիրատուի եւ մասամբ նաեւ բովանդակության վերաբերյալ: Այսպես՝ «**Յովհաննու Տարօնացւոյ** ըստ արժանեաց կոչեցեալ վարդապետի աշակերտի երանելոյ վարդապետին Անանիայի Արշարունեցւոյ. Շարադրութիւն **պատմութեան Տանն Բագրատունեաց** ի վերայ Հայաստանեայց, զոր արարի **հրամանաւ Տեառն Պետրոսի Հայոց Կաթողիկոսի** արժանաւոր աթոռակալի Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, իմաստուն եւ հանճարեղ գիտնաւորի գրոց սրբոց եւ ուղղիչ դիտապետի

[2] **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 52 եւ 67:

[3] Հովհաննես Կոզեռնի մասին մանրամասն տես **Հ. Քյուրտյան**, Հովհաննես վարդապետ Կոզեռն. «Հանդէս ամսօրեայ», 1967, թ. 1-3, էջ 1-16. **Н. Марр**, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне. "Восточные заметки", СПб., 1895, էջ 9-34. **Հ. Քյոսեյան**, Հովհաննես Կոզեռն Տարոնեցին եւ նրա աստվածաբանական ժառանգությունը. «Մատենագրիք Հայոց», հտ. ԺԶ., ԺԱ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2012, էջ 25-32:

[4] Տես «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Ե., կազմեց Օ. Եգանեանը, Երեւան, 2009, էջ 1179-1183:

Եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի Տանն Թորգոմայ»[5]: Այս չափազանց արժեքավոր վկայությունից ակներև է՝

1. Մեզ չհասած երկասիրությունը կրել է «Պատմութիւն Տանն Բագրատունեաց ի վերայ Հայաստանեայց» խորագիրը.

2. Երկասիրության հեղինակն է «ըստ արժանեաց կոչեալ վարդապետ» Անանիա Արշարունեցու աշակերտ Հովհաննես Տարոնացին.

3. Երկասիրության պատվիրատուն եղել է Հայոց Կաթողիկոս Պետրոս Ա. Գետադարձը (1019-1058):

Անշուշտ, «Պատմութիւն Տանն Բագրատունեաց» կորած երկասիրության իրողությունն է հիմք դարձել ԺԲ. դարի պատմագիր Մխիթար Անեցու համար, որն իր «Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց» երկասիրության երրորդ ճառի («Թէ զինչ է պատմութիւն եւ կամ քանիք են, որ յայտնի են առ մեզ») հատվածում Արիստակես Լաստիվերցուց հետո եւ Սամուել Անեցուց առաջ արձանագրել է՝ «եւ Կոզոռանն»՝ առանց անվան եւ երկասիրության խորագրի հիշատակության[6]:

Պատմագիր Մխիթար Այրիվանեցին (1222-1290) Բագրատունյաց տան պատմության հեղինակին հիշատակել է երկու անգամ. նախ տեղ է հատկացրել «Պատմագիրք ի սկզբանէ» հատվածում՝ Արիստակես Լաստիվերցուց հետո եւ Մատթեոս Ուռհայեցուց առաջ[7], ապա՝ «1051-ին Յովհաննէս վարդապետ Տարոնեցի արար Պատմութիւն Բագրատունեացն հրամանաւ տէր Պետրոսի»[8]: Որպես պատմագիր եւ Բագրատունյաց տան պատմության հեղինակ՝ Հովհաննես Կոզեռնը հիշատակվում է նաեւ 1724 թ. Սպահանում Ավետիս երեցի ընդօրինակած «Գիրք ժողովածու» բնագրում: Այստեղ զետեղված «Պատմագիրք Հայոց» ցանկի 21-րդ համարի ներքո արձանագրված է. «Յոհան Կոզեռն. արար պատմագիրք, որ ինչ ժամանակս իւր»[9]: Նույն ցանկի համար 22-ի ներքո ձեռագրի գրիչը, անշուշտ, թյուրիմացաբար արձանագրել է. «Յոհան Տարոնեցի, որ է Պատմութիւն Բագրատունեաց»: Ակներև է, որ շփոթության տեղիք են տվել պատմագրի անունն ու մականունը, եւ դրանք դիտարկվել են որպես

[5] Անդ, էջ 1179 (ընդգծումները՝ Ա. Ու.):

[6] **Մխիթար Անեցի,** Մատեան աշխարհավէպ հանդիսարանց, աշխատ.՝ Հ. Գ. Մարգարյանի, Երեւան, 1983, էջ 73:

[7] «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1860, էջ 23:

[8] Անդ, էջ 59:

[9] Մաշտոցի անվ. Մատենադարան, Ձեռագիր Հմր 2271, էջ 214 ա-215 բ. նաեւ՝ Ձեռագիր Հմր 2220, էջ 291բ-293ա. հմմտ. **Հ. Ս. Անասյան,** Հայկական մատենագրություն, Ե.-Ժ.-Ը. դդ., հտ. Ա., Երեւան, 1959, էջ IV:

առանձին միավորներ՝ «Յոհան Կոզեռն» եւ «Յոհան Տարօնացի»: Նման նույնացումը, սակայն, երբեմն հանդիպել է ընդդիմության, եւ ժխտվել է Հովհաննես Կոզեռնի եւ Հովհաննես Տարոնեցու նույնականությունը: Այսպես՝ բազմահմուտ պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը գրում է. «Ապացուցված չէ (Հովհաննես) Տարոնեցու եւ (Հովհաննես) Կոզեռնի նույնությունը... Կոզեռնին եւ Տարոնեցուն չէր նույնացնում լավատեղյակ Վարդան Բաղիշեցին»[10]: Եվ իրոք, Վարդան Բաղիշեցին (1610-1673) Հովհաննես Կոզեռնին տարբերակում է Հովհաննես Տարոնացուց, սակայն հարց է ծագում՝ որքա՞ն կարող է լավատեղյակ լինել ԺԷ. դարի մատենագիրը Ժ.-ԺԱ. դարերի իրողություններին, երբ խոսքը, ինչպես տեսանք, մի պարզ թյուրըմբռնման մասին է: Այսպես՝ ԺԲ.-ԺԷ. դարերի բազաթիվ գրչագրերում նշանավոր վարդապետը հիշատակվում է միասնական անուն-մականունով՝ «Յովհաննէս վարդապետ Կոզեռն»[11]: Նույն Վարդան Բաղիշեցու օրերում գրիչ Մաղաթիա արեղան, 1624 թ. իր կազմած ժողովածուում[12] զետեղելով «Մեկնութիւն տումարի» երկասիրությունը[13], մանրամասնում է «զոր արարեալ է Յովհաննիսի վարդապետի, զոր մականուն Կոզեռն կոչեցեալ»[14]:

Կարծում ենք՝ բերված փաստերը բավական են համոզելու, որ Հովհաննես վարդապետն ու Հովհաննես Կոզեռնը նույն անձնավորությունն են, որը հեղինակն է «Պատմութիւն Տանն Բագրատունեաց»՝ մեզ չհասած երկասիրության:

---

[10] **Ա. Գ. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1, Երեւան, 1957, էջ 56-57, ծան. 2:

[11] Մաշտոցի անվ. Մատենադարան, Ձեռագիր Հմտ 1999 (ԺԲ. դար)՝ «Մեկնութիւն տումարի զոր արարեալ է Յովհաննիսի վարդապետի, որ մականուանէին Կոզեռն» (էջ 67 բ-77 ա). հմմտ. Ձեռագիր Հմտ 6012 (ԺԳ. դար)՝ «Յովհաննիսի Հայոց վարդապետի որ եւ մականուն Կոզեռն՝ ասացեալ յաղագս Վարդավառի տաւնին» (էջ 78-ա-86բ):

[12] Տես Ձեռագիր Հմտ 2292:

[13] Անդ, էջ 273բ-277բ:

[14] Տես անդ, էջ 273. հմմտ. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Է., Երեւան, 2012, էջ 823:

РЕЗЮМЕ

Одна из тяжелых потерь армянской средневековой исторической науки -пропажа произведения известного философа, богослова, летописца Оганнеса Козерна Таронеци "История Дома Багратидов". Этот труд не упоминался после 13-го века и считался потерянным, хотя в 13-17 веках несколько летописцев упоминали Оганнеса Таронеци Козерна как автора "Истории Дома Багратидов". Однако в арменоведении существует мнение, что Оганнес Таронеци и Оганнес Козерн разные люди. В статье доказывается их тождественность и авторство «Истории Дома Багратидов".

SUMMARY

One of the painful losses of the Medieval Armenian history is the work of well-known philosopher, theologian, calendarologist Hovhannes Kozern Taroneci "History of the House of Bagratids". It has not been mentioned since the 13th century and considered to be lost, although from the 13th to the 17thcenturies a few writers had mentioned Hovhannes Taronetsi Kozern as the author of the "History of the House of Bagratids". However, there is a perception in Armenology, that Hovhannes Taronetsi and Hovhannes Kozern are different identites. The article proves that they are the same person appearing as the author of the "History of the House of Bagratids".